ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 27.07.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2018/94

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 27.06.2018թ. թիվ 03/26-3/11729-18 գրությամբ «Ոստանիկ Հայրենյաց» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 09809097) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարարության 25.06.2018թ. թիվ ԴՎԱ/2939 գրության հիման վրա, 27.06.2018թ. նախաձեռնել է «Ոստանիկ Հայրենյաց» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարարությունը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 25.06.2018թ. թիվ ԴՎԱ/2939 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-2/1» ծածկագրով բաց մրցույթի 3-րդ և 14-րդ չափաբաժինների մասով «Ոստանիկ Հայրենյաց» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից: Սահմանված կարգով վերոնշյալ մասնակցին armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ եղանակով ծանուցվել է երեք (3) աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ և ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում է կատարվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ: ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից ստացված եզրակացության համաձայն՝ «Ոստանիկ Հայրենյաց» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություններ՝ 616,480 ՀՀ դրամի չափով: Ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 44-րդ կետը՝ որոշեց մերժել «Ոստանիկ Հայրենյաց» ՍՊԸ-ի հայտը:

«Ոստանիկ Հայրաենյաց» ՍՊԸ-ն չի ներկայացրել նաև Կարգի 45-րդ կետով նախատեսված փաստաթղթերը»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Արտաշես Սաղաթելյանը:

3. <u>«Ոստանիկ Հայրենյաց» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Ոստանիկ Հայրենյաց» ՍՊԸ-ն 17.07.2018թ. Բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ, որ ըստ հարկային մարմնի կողմից տրված տեղեկատվության, 23.05.2018թ. դրությամբ «Ոստանիկ Հայրենյաց» ՍՊԸ-ի հարկային պարտավորությունը կազմել է 616,480 ՀՀ դրամ, սակայն դա չի համապատասխանում փաստացի պարտավորությանը, քանի որ ներկայացված պարտավորության մեջ ներառված չէ 2017թ. ընթացքում «Ոստանիկ Հայրենյաց» ՍՊԸ-ի կողմից մուծված շահութահարկի կանխավճարի գումարը, որը կազմել է 1,884,408 ՀՀ դրամ: Ընկերությունը չի կարողացել դիտել հարկային պարտավորությունների (միասնական հաշվի) քաղվացքը, քանի որ քարտի վարման էլեկտրոնային համակարգը գտնվել է փորձարկման փուլում: Այնուհետև, քարտի քաղվածքը դիտելուց հետո «Ոստանիկ Հայրենյաց» ՍՊԸ-ն 28.06.2018թ. ներկայացրել է շահութահարկի ճշտված հաշվարկ, ըստ որի քարտը վերահաշվարկվել է, և Ընկերությունը փաստացի հարկային պարտավորություն չի ունեցել»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Ընկերության լիազորված ներկայացուցիչ Աշոտ Մովսիսյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/94 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 27.06.2018թ. թիվ 03/26-3/11729-18 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ պաշտպանության նախարարարության 25.06.2018թ. թիվ ԴՎԱ/2939 գրությունը, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-2/1» ծածկագրով բաց մրցույթի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-2/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 30.05.2018թ. նիստի թիվ 3, 11.06.2018թ. նիստի թիվ 4 և 06.06.2018թ. նիստի թիվ 5 արձանագրությունները, «Ոստանիկ Հայրենյաց» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը.

ՀՀ պաշտպանության նախարարարության կարիքների համար սպորտային ունեցվածքի գնման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-2/1» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Ոստանիկ Հայրենյաց» ՍՊԸ-ն:

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-2/1» ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հանձնաժողովի 30.05.2018թ. նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետի 3.1 ենթակետի համաձայն՝ Ընթացակարգի շրջանակներում «Ոստանիկ Հայրենյաց» ՍՊԸ-ի կողմից 3-րդ և 14-րդ չափաբաժինների մասով ներկայացված գնային առաջարկները համապատասխանաբար կազմել են՝ 78.000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) և 750.000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ):

Նույն արձանագրության 4-րդ կետի 4.1 ենթակետով Հանձնաժողովը որոշել է Ընթացակարգի 3-րդ և 14-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Ոստանիկ Հայրենյաց» ՍՊԸ-ին, իսկ նույն կետի 4.3 ենթակետով՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև Ընթացակարգի հրավերի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 05.06.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Ոստանիկ Հայրենյաց» ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով հայտը ներկայացվելու օրվա՝ 23.05.2018թ. դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված շեմը գերազանցող՝ 616.480 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն:

Հանձնաժողովը 06.06.2018թ. նիստի թիվ 5 արձանագրության 1.1 կետով արձանագրել է, որ Ընկերությունը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով հայտը ներկայացվելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է 616.480 ՀՀ

դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն, և որոշել է Ընկերության տվյալները ուղարկել լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն երեք աշխատանքային օրվա ընթացքում չներկայացնեն լրացուցիչ տվյալներ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին.
- 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում.
- 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի

կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

• 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-2/1» ծածկագրով բաց մրցույթի հրավերի՝

• 8.2 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում նույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 8.12 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև նույն հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում նույն ենթակետում հարցումն ուղարկվում է Ashkhen_Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին նույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine_Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին.

• 8.15 կետի համաձայն՝ կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 8.13 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման

մասին նույն հրավերի 9-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում նույն հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջներին և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Նույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում նույն հրավերի 1-ին մասի 8.20 կետի 2-րդ ենթակետով նախատեսված ընթացակարգը:

- 8.16 կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր եղանակով տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Ընդ որում, եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հայտով ներկայացված հայտարարությունը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 2-րդ հոդվածի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

- 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող անձի մոտ՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Ընթացակարգի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը հայտնեց, որ Ընկերության հարկային հաշվում արտացոլված ժամկետանց հարկային պարտավորությունն առաջացել է այն պատճառով, որ Ընկերության կողմից 11.04.2018թ. ներկայացված շահութահարկի հաշվարկում չի ներառվել 2017թ. ընթացքում «Ոստանիկ Հայրենյաց» ՍՊԸ-ի կողմից մուծված շահութահարկի կանխավճարի գումարը, որը կազմել է 1,884,408 ՀՀ դրամ: Ընկերության ներկայացուցիչը հավաստիացրեց, որ Ընկերությունը չի կարողացել դիտել իր հարկային պարտավորությունների միասնական հաշվի քաղվացքը, քանի որ քարտի վարման էլեկտրոնային համակարգը գտնվել է փորձարկման փուլում: Այնուհետև, արդեն Ընթացակարգից հետո, քարտի քաղվածքն ուսումնասիրելուց՝ «Ոստանիկ Հայրենյաց» ՍՊԸ-ն 28.06.2018թ. ներկայացրել է ճշգրտված շահութահարկի հաշվարկը, ինչից հետո միայն վերը նշված գումարն արտացոլվել է Ընկերության միասնական հաշվում:

Ընկերությունը Բողոքներ քննող անձին ներկայացրեց.

- Ռեզիդենտի շահութահարկի հաշվարկ առ 11.04.2018թ., որի 37-րդ տողում (հաշվետու տարում հաշվարկված շահութահարկի կանխավճարների հանրագումարը) որևէ թվային ցուցանիշ նշված չէ:

- Ռեզիդենտի շահութահարկի հաշվարկ առ 28.06.2018թ., որի 37-րդ տողում (հաշվետու տարում հաշվարկված շահութահարկի կանխավճարների հանրագումարը) նշված է՝ - 1,884,408:

- ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից 06.07.2018թ. «Ոստանիկ Հայրենյաց» ՍՊԸ-ին տրված՝ «Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ» տեղեկանքը, ըստ որի Ընկերության պարտավորության չափը 04.07.2018թ. դրությամբ կազմել է 6,018 ՀՀ դրամ (ներմուշման մասով ավելացված արժեքի հարկի մասով՝ 2,511 ՀՀ դրամ, եկամտային հարկի մասով՝ 1,254 ՀՀ դրամ, և տուգանքների և հատուցման գումարը՝ 2,253 ՀՀ դրամ):

Ընթացակարգի վերաբերյալ որոշում ընդունելու նպատակով՝ Բողոքներ քննող անձը որպես Ընկերության կողմից ներկայացված փաստարկների ապացույց՝ վերջինից պահանջեց ներկայացնել հարկային մարմնի կողմից տրված տեղեկանք առ այն, որ

23.05.2018թ. դրությամբ Ընկերության ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցած 616,480 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորությունը եղել է շահութահարկի գծով ժամկետանց հարկային պարտավորություն, ինչպես նաև տեղեկանք Ընկերության հարկերի միասնական հաշվին առաջացած 1,267,928 ՀՀ դրամի չափով գերավճարի մասին (1,884,408-616,480), սակայն ընթացակարգի քննության շրջանակներում Ընկերության կողմից պահանջված փաստաթղթերը չներկայացվեցին:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Ոստանիկ Հայրենյաց» ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով հայտը ներկայացվելու օրվա՝ 23.05.2018թ. դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված շեմը գերազանցող՝ 616.480 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն:

Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ Ընկերության կողմից իր հարկային պարտավորությունները պատշաճ կատարած լինելու վերաբերյալ որևէ հիմնավոր ապացույց չներկայացվեց:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Ոստանիկ Հայրենյաց» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի N 2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարելով և հավաստելով, որ բավարարում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-2/1» ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, նեկայացրել է իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն, ինչը հանգեցրել է գնման գործընթացին «Ոստանիկ Հայրենյաց» ՍՊԸ-ի հետագա մասնակցության դադարեցմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ առկա է «Ոստանիկ Հայրենյաց» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված հիմքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով, 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 27.06.2018թ. թիվ 03/26-3/11729-18 գրությամբ «Ոստանիկ Հայրենյաց» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 09809097) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Ոստանիկ Հայրենյաց» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ